Օբերսալզբուրգյան Ճառ
Ցեղասպանության գրականության ցանկի հավելված ©

Երկրորդ հրատարակություն



Ժան Ժանսեմ

English

Français

Русский

Español

Հայերեն

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ, PDF 8



1939թ. օգոստոսի 22-ին Գերմանիայի կանցլերի Օբերսալզբուրգյան ճառը, որը ներկայացվել է գլխավոր հրամանատարությանը և ղեկավար գեներալիտետի առջև փակ դռների ներքո, խիստ վճռորոշ էր: Առկա է ելույթի ամբողջական թարգմանությունը, որը կցված է եղել տեղեկատվական նամակին: Բեռլինում Բրիտանական դեսպանության քարտուղար Սըր Ջորջ Օգիլվի-Ֆորբսի կողմից այն ուղարկվել է Լոնդոնի արտաքին գործերի գրասենյակ 1939թ. օգոստոսի 25-ին: *Բրիտանական արտաքին քաղաքականության փաստաթղթեր 1919-1939թթ.* Լոնդոն, HMSO, երրորդ շարք, 1954, հատոր VII, փաստաթուղթ 314:

Ակնհայտ է, այս արևելամետ և մեծապես ընդլայնողական անարդյունավետ նպատակը մշակվել էր 1919-20թթ., Փարիզի Խաղաղության կոնֆերանսի ավարտից շատ տարիներ հետո, երբ Գերմանիայի հետ խաղաղություն կնքելու նախապայմաններն ավարտված էին: Փարիզի Խաղաղության Կոնֆերանս: Դրանից բխող նպատակները, ինչպես նշվում է, առաջ էին բերում հավելյալ լայն գործոններ: Այսպիսով, Վեյմարյան Հանրապետության կողմից հետապնդվող ընդհանուր նպատակը Արևմուտքում զգալիորեն տարբերվում էր Երրորդ Ռեյխինից: Հետևաբար, հավելյալ որակավորումները պատշաճորեն են արտահայտված:

Անցյալում հայերի ոչնչացմանը վերաբերող հղումը ի ցույց է դնում զանգվածային ոչնչացման օրինակ, որը չի վիճարկվել Միացյալ Նահանգների, Արևմտյան Եվրոպայի և իհարկե, Ռուսաստանի՝ ամենաառաջին ոճրագործի կողմից: Թողնելով Հիտլերի կատարած մեջբերումը, հարկ է նշել, որ նացիստական հիերարխիան նույնպես տեղյակ էր Հայաստանի աղետալի ճակատագրի, ինչպես նաև ոճրագործներին հատուկ վտանգավոր համախտանիշի մասին: Այսպիսով, որպես ստահոդ դիտարկում, ողջամիտ է համարվել կատարել նմանատիպ ազգային ոչնչացում՝ այս դեպքում Արևելքում գտնվող հարևանի հանդեպ՝ հստակ անպատժելիության պայմաններում: Լեհաստանը որպես պետություն պետք է վերացվեր, և սա վճռական որոշում էր: Հետևաբար, կանխամտածված

մաքսիմալիստական բռնությունը կործանեց նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում հրեական ազգությանը: Սա, բոլոր առումներով, հիմնովին ընդգրկուն Ցեղասպանություն է, որը խստորեն պարուրված է երկաթյա օղակ հանդիսացող Վերջնական Լուծմամբ:

Օբերսալզբուրգյան ճառը, ինչպես այն բնորոշվում է Նյուրնբերգյան դատավարության ընթացքում, ունի երեք տարբերակներ: Գերմաներենից անգլերեն կատարված թարգմանությունները պատշաճ են: Ընդգրկուն տարբերակի ամբողջական օրինակը, որն հապճեպորեն ձեռք էր բերվել Բեռլինի բրիտանացի դիվանագետների կողմից, այն օրինակն է, որն ի ցույց է դնում Երրորդ Ռեյխի իրական ոգու և միտումնավոր հաշվարկված հեռանկարները: Իսկապես, ճառը արտահայտչորեն էր ասվում և այնպիսի անամոթ կերպով էր շարադրված, որ *Ռեյխսմարշալ* Հերման Գյորինգը՝ Առաջին Համաշխարհային Պատերազմի վետերան և Կապույտ Մաքսի շքանշանակիր, արագորեն ցատկեց սեղանի վրա և տվեց «արյունարբու խոստումներ և վայրենու պես սկսեց պարել»: Ներկաներից ոմանք, ովքեր ունեին որոշակի մտավախություն, լուռ մնացին: Անշուշտ, որպես հավելում, խելամիտ է հաշվի առնել նաև Սովետական Ռուսաստանի հետ գաղտնաբար ձեռք բերված միմյանց վրա չհարձակվելու պայմանագիրը՝ Մոլոտով-Ռիբբենտրոպյան պակտը, որը պետք է ստորագրվեր դրա հաջորդ օրը՝ Մոսկվայում: Այն նշանակալիորեն կատարելագործեց Երրորդ Ռեյխի ընդլայնողականության հեռանկարը՝ հատկապես Արևելքի ուղղությամբ: Դեռ ավելին, ճառը խորապես հաստատեց պլանավորված ներխուժումը: Համարձակ Ազգային Սոցիալիստների [նացիստներ] համար եկել էր բուռն ցնծության ժամանակը:

Փաստաթղթի համապարփակ տարբերակը, որի տեղեկատվության աղբյուրն է հանդիսանում ներկա գտնվող Գեներալներից մեկը, ով սարսափելով իր լսածից ձգտում է սանձել այս ծայրահեղականությունը, այդ մասին աշխատակազմի սպայի միջոցով բարեհաջող տեղեկացնում է նաև Ամերիկայի Ասոշիեյթեդ Պրեսին, իսկ այնուհետ այդ կազմակերպությունը փաստաթուղթն անմիջապես փոխանցում է Բեռլինում Բրիտանական դեսպանությանը:

Նկատելի է, որ ճառի համապարփակ տարբերակը չէր համապատասխանում բարոյականությանը, չնայած որ այն վստահորեն կազմակերպված էր շրջանառության մեջ դնելու համար: Հետևաբար, դրանից հետո հայտնաբերված մասնակի տարբերակները անակնկալ չէին: Համապարփակ տարբերակը կարող է լինել նաև այդ օրը հնչած երկու ճառերի համակցությունը: Դրան հաջորդող ճաշկերույթի ժամանակ խանդավառված կանցլերը հայտարարեց, որ ռազմական գործողությունները պետք է անհապաղ մեկնարկեն, քանի որ ինքը դժվար թե երկար ապրի: Ակնհայտ է, որ նրան հաջորդողը չէր կարողանալու իրագործել բացահայտ հայտարարված նպատակները: Նա գուշակել էր նաև, որ երկու տարի հետո ռազմական դրությունը թույլ չի տա գործնականում իրականացնել:

Փաստաթուղթն ունի նաև Բեռլինում Բրիտանիայի դեսպան Սըր Նեվիլ Հենդերսոնի գրած նամակը՝ հասցեագրված Լոնդոնի արտաքին գործերի գրասենյակին, որում նշված են որոշակի թիրախային աղեղներ: Նա նշում է, որ կանցլերը որոշել է «ռիսկային խաղադրույք» կատարել և որ ինքը զգուշացրել է կանցլերին ընդհանուր առմամբ պատերազմի որոշակի բնորոշմամբ: «…թեև կարելի է կանխատեսել սկիզբը, ոչ ոք չի կարող կանխագուշակել դրա ընթացքը և ավարտը, և որ վաղ շրջանում ունեցած հաղթանակները չեն նշանակում հաղթանակ վերջում»: Հենդերսենը պարզապես ճիշտ էր, չնայած որ Ճառի անբաժանելի հետևանքները խիստ նշանակալի էին: Դրա ծայրահեղական շարադրանքը գերազանցելու էր: Դրան հաջորդող զարգացումներն ապացուցված է, որ կործանարար էին:

Լեհաստան ներխուժեցին 1939թ. սեպտեմբերի 1-ին և սա Երկրորդ Համաշխարհային պատերազմի մեկնարկն էր: Որպեսզի ժամանակ շահվի, Չեխոսլովակիան արդեն վաճառված էր: Արևմտյան ճակատի դաշնակիցները՝ Բրիտանիան և Ֆրանսիան, արագորեն պատերազմ հայտարարեցին Գերմանիայի դեմ: Այնուամենայնիվ, Դաշնակիցների համար անակնկալ էր սպասվում, քանի որ նրանք միանգամից ապակողմնորոշվեցին արագորեն զարգացող մեխանիզացված հարձակումներից: Բենիլյուքսի երկրները բռնազավթվեցին: Ֆրանսիայի արագ կազմալուծումն ամենից անսպասելին էր: Իսկապես, Փարիզն օկուպացվեց 1940թ. հունիսի 14-ին՝ առանց պայքարի: Բրիտանական հետևակային ուժերը, որոնց կազմում կային մի քանի ֆրանսիական դիվիզիաներ, Դունկիրկից տարհանվեցին Բրիտանիա: Իտալիան միացավ Առանցքի ուժերին 1940թ. հունիսի 10-ին: Արևմտյան ճակատն ապահովելուց հետո Երրորդ Ռեյխն իր ուշադրությունը մեկ անգամ ևս սևեռեց դեպի Արևելք, որտեղ գտնվում էին նրա առաջնային նպատակները: Այս առումով, Ադոլֆ Հիտլերի կողմից գրված և Ռուդոլֆ Հեսսի՝ նախավերջին բարձրյալի կողմից խմբագրված «*Իմ Պայքարը*» աշխատության մեջ, որն արդեն հրապարակված էր 1925-26թթ., բացահայտվում են մի շարք հիմնարար թշնամական ուղղություններ: Ռուսական ղեկավարությունը պետք է որ այն մանրակրկտորեն ուսումնասիրած լիներ:

1941թ. հունիսի 22-ին Նացիստական Գերմանիան հարձակվեց Սովետական Ռուսաստանի վրա իր Բարբարոսսա օպերացիայով: Անկասկած, լավ մշակված հարձակման արդյունքում ռուսները հանկարծակիի եկան: Դրանից չորս օր առաջ Բեռլինը Անկարայում ամրապնդել էր իր հեռահար նպատակները՝ փոխադարձ չհարձակման պայմանագիր կնքելով Թուրքիայի Հանրապետության հետ: Մի պետություն, որը թուրքիզմի ընդլայնողականության ռասիստ-ազգայնական գաղափարախոսության վրա է հիմնված: Ամբողջովին ծայրահեղական հիմունքներով գոյացած ռեժիմը հանդիսանում էր սովետական մարքսիզմի խոչընդոտը: Արևելյան ճակատը հիմնականում առաջ էր գնում երեք աղեղներով: Հյուսիս-արևելյան աղեղը, որն ուներ աշխարհագրական սահմանափակումներ, ներառում էր Լենինգրադի պաշարումը 1941թ. սեպտեմբերի 8-ից մինչև 1944թ. հունվարի 27-ը: Կենտրոնական աղեղը ներառում էր 1941թ. հոկտեմբերի 2-ից մինչև 1942թ. հունվարի 7-ը տևած Մոսկվայի ճակատամարտը: Գերմանացիները ձախողեցին Մայրաքաղաքի գրավումը:

Հարավ-արևելյան աղեղը ներառում էր Էդելվեյս և Քեյս Բլու օպերացիաները: Նրանց համատեղ նպատակը Կովկասյան լեռներն անցնելն էր, որտեղ գտնվում էին Կասպիական ափերին մոտ գտնվող կարևոր նավթահանքերը: Սա այն աշխարհագրական տիրույթն է, որը ձգվում է Սև և Կասպից ծովերի միջև: 1942թ. օգոստոսին գերմանացիները բարձրացրեցին սվաստիկան մի շարք լեռների գագաթներին: Իրանը նշվում էր որպես հյուսիսի հարևան, որից հետո Պարսից ծոցն էր և Հնդկական օվկիանոսը: Ոգևորված Թուրքիան վեր հանեց իր բանակը՝ շուրջ քսանհինգ դիվիզիաներ տեղաշարժելով դեպի Հարավային Կովկաս, որտեղ գտնվում էր Սովետական Հայաստանը, որը ենթակա էր Գերմանիայի և Թուրքիայի կողմից համատեղ հարձակման: Սա կլիներ Ցեղասպանության ընդլայնումը: Ցեղասպանության Գրականության Ցանկ: Գերմանիան, այնուամենայնիվ, մերժեց տարածաշրջանում Թուրքիայի հետ որևէ համատեղ գործակցություն իրականացնել և նույնը խորհուրդ տվեց նաև Թուրքիային: Թուրքիայի պլանավորած ներխուժումը դադարեցվեց: Փոքրիկ Հայաստանի Հանրապետությունը գոյատևեց: Գերմանիայի քաղաքականությունը մտայնություն ուներ որևէ մեկի հետ չկիսել տարածաշրջանի ռազմավարական նշանակության դիրքերը, ինչպես նաև արժեքավոր ռեսուրսները: Թուրքիայի հետ համատեղ ռազմական գործողությունները, ինչպես տեղի ունեցավ Առաջին Համաշխարհային Պատերազմի ժամանակ, իհարկե, վիատեցնող կլինեին: Թերևս, հեռավոր հյուսիսում՝ Ստալինգրադում և Վոլգայում կրած լուրջ կորուստների պատճառով, այս ճակատում

օպերացիաները դադարեցվեցին: Կովկասից հեռանալու հրամանը եղավ 1942թ. դեկտեմբերի 28-ին: 1943թ. փետրվարի 2-ին գերմանական 6-րդ բանակը արդեն իսկ լիովին ջախջախվել էր Ստալինգրադում: Դրան հարջորդած գերմանացիների պարտությունը Կուրսկի ճակատամարտում (Տանկերի պատերազմ), որը տևեց 1943թ. հուլիսի 5-ից մինչև օգոստեսի 23-ը, հաստատեց գերմանացիների ռասիստ-ազգայնական նպատակների վերացումը Արևելքում: Անգլո-ամերիկյան վճռական գործողությունների արդյունքում վտանգը վերացվեց Արևմտյան Եվրոպայում: Գերմանիան հանձնվեց 1945թ. մայիսի 7-ին: Չորս ամիս անց՝ սեպտեմբերի 2-ին, Ճապոնիան ևս հանձնվեց և այսպիսով ավարտվեց լայնամասշտաբ պատերազմը:

Ազգային Սոցիալիզմի ցայտուն գաղափարախոսական նպատակներից մեկը եվրոպական ռասայի վերաինժեներավորման փորձն էր: Երևի թե այս նպատակը ամենաանիրատեսականն էր: Լավագույնը կլիներ պահպանել այն ինչ արդեն կար: Նացիստական գաղափարախոսությունների ջերմեռանդ իրագործումը մայրցամաքային Եվրոպայում որոշ չափով հարուցել է Եվրոպական քաղաքակրթության ստրատիֆիկացիոն հավասարակշռության շեղումներ: Եվրոպայի Սահմանները: Հետևաբար, մի շարք չափանիշներ և արժեքներ պետք է վերահաստատվեն և վերաուղղվեն, և դրանք պետք է ներառեն գլոբալ ճյուղավորումների հետևանքային զարգացումները: Իրավունքներ և Արժեքներ: Ռասիստական-ազգային գաղափարախոսությունները, որոնք ձևավորվում են ներքին կամ արտաքին մակարդակներում, ինչպես նաև արտաքին ուժերի կողմից ուղղորդվող քաղաքականացված ընդլայնվողական կրոնական շարժումները, որոնք կասկածի տակ են դնում Եվրոպական քաղաքակրթությանն իր իսկ գլոբալ աշխարհագրական տիրույթում, ինչպես դա ցույց տրվեց վերևում, կարելի է վերջնականապես վերացնել: Ամենից առաջ, իհարկե, պետք է չկրկնել անցյալի սխալները:

Օբերսալզբերգ, Բավարիա. Երրորդ Ռեյխի հիերարխիային պատկանող Ալպիական համալիր: Այն նաև բնակեցվում էր SS-ական զորքերի ջոկատներով, որոնք ապահովում էին Ֆյուհրերի անվտանգությունը:
Սարի գագաթին գտնվող ամենաբարձր շինությունը համարվում էր հեղինակավոր «Արծվի Բույնը»:
Համալիրը ավերվել էր 1945թ. ապրիլի 25-ին օդային հարվածներից, որը պլանավորված էր Դաշինքի ուժերի ռմբակոծումներ իրականացնող հրամանատարության կողմից:

Թ. Ս. Քահվե
Արարատ Ժառանգություն
Լոնդոն,
Մայիս 2017